ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՀՐԱՄԱՆԻ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼՅԱՆ

Քաղաքագլխի պաշտոնում փոխարինել է ավագ եղբորը՝ Իսահակ Մելիք - Աղամալյանին: Ծնվել է 1861թ., Երևանում, տոհմական ազնվականի ընտանիքում: Ավարտել է Երևանի պրոգիմնազիան: 1879 թվականից անցել է պետական ծառայության: Վարել է մի շարք պաշտոններ, եղել է նահանգապետին առընթեր հատուկ հանձնարարությունների գծով պաշտոնյա: Ծառայության ընթացքում հասել է պալատական խորհրդականի աստիճանի:

Երևանի քաղաքագլուխ է ընտրվել 1904 թվականի մարտին և պաշտոնավարել մինչև 1910թ. վերջը, երկրորդ անգամ՝ 1912թ. փետրվարին: 1914թ. հիվանդության պատճառով թողել է պաշտոնը:

Պարգևատրվել է Սուրբ Վլադիմիրի 4-րդ, Սուրբ Աննայի 2-րդ և 3-րդ, Սուրբ Ստանիսլավի 2-րդ և 3-րդ աստիճանի, պարսկական <<Առյուծ և արև>> շքանշաններով: